

PRESS RELEASE

Diocese of the Armenian Church of Australia & New Zealand

10 Macquarie Street

Chatswood NSW 2067

AUSTRALIA

Contact: Rev. Fr. Avetis Hambardzumyan

Tel: (02) 9419-8056

Fax: (02) 9413-1709

Email: primate@armenian.com.au

Web: www.armenianchurchsydney.org.au

22 նոյեմբերի, 2011 թ.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Հայրապետական Օրհնութեան Գրով Ավետիս քին. Համբարձումյանին
շնորհվեց Քահանայական Լանջախաչ կրելու իրավունք**

Նոյեմբերի 20-ին Սիդնեյի Ս. Հարություն առաջնորդանիստ եկեղեցում, հընթացս Աբ. Պատարագի, ձեռամբ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Աղան Արքեպիսկոպոս Պալիոզեանի, Քահանայական Լանջախաչ շնորհվեց եկեղեցու հոգևոր հովիվ՝ արժանապատիվ Ս. Ավետիս քին. Համբարձումյանին:

Աբ. Պատարագի ընթացքում Ս. Պարթև քին. Գարագաշեանի կողմից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից շնորհված Օրհնության Գիրը հանդիսավորապես բարձրացվեց Աբ. Խորան, և ընթերցվեց Ս. Նորայր ավագ քին. Բաթանեանի կողմից, որում մասնավորաբար ասվում էր.

«Սիրելի Տէր Հայր,

Համայն հայութեան հոգևոր նուիրական կենտրոն սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ի գնահատութիւն Ձեր արդիւնավոր ծառայութեան և սիրով ընդառայ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Աղան Արքեպիսկոպոս Պալիոզեանի խնդրանքին, Հայրապետական Օրհնութեան այսու Գրով շնորհում ենք Ձեզ ԲԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ կրելու իրավունք...»:

Այսուհետև Թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Ս. Աղան Արք. Պալիոզեանը պահպանիչ աղոթքով լանջախաչը հանձնեց Ս. Ավետիս քահանային՝ շնորհավորելով և մաղթելով նախանձախնդիր և արդյունաբեր հոգևոր ծառայություն: